ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16-17-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

24 նոյեմբերի 2016թ. ք. Երևան

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ Ռ. ԴԱԼԼԱՔՅԱՆԻ

ԿԿ-ի անդամներ՝ Ա. Լոպոյան
Հ. Բաբայան
Բ. Ղալոյան
Խ. Զարգարյան

Հրավիրված

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 21/11/16թ. «Էրեբունի»-«Գանձասար-Կապան-2» (ԱԽ052) խաղին «Էրեբունի» թիմի ֆուտբոլիստ Հարություն Միրզախանյանի (N 13344) հեռացման (մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու համար) մասին /զեկուցող Ա. Լոպոյան/

2. ՄԿԱ բաժանմունքի պետ Ա. Լոպոյանի 24/11/2016թ. զեկուցագրի քննարկումը /զեկուցող Ա. Լոպոյան/

3. 19/11/16թ. «Բանանց-1-99»-«Փյունիկ-1-99» (18036) խաղին «Փյունիկ-1-99» թիմի մարզիչ Տիգրան Պետրոսյանցի (N 4765) հեռացման (խաղի ավարտից հետո մրցավարների հասցեին անվայել վիրավորական խոսքեր արտահայտելու համար) մասին /զեկուցող Բ. Ղալոյան/

4. 17/11/16թ. «Արարատ-2000»-«Գանձասար-Երևան-2000» (17Գ004) խաղի նախախաղային խորհրդակցությանը ոստիկանության ներկայացուցչի չմասնակցելու մասին /զեկուցող Բ. Ղալոյան/

5. Մանկապատանեկան բաժանմունքի պետ Բ. Ղալոյանի 23/11/2016թ. զեկուցագրի քննարկումը /զեկուցող Բ. Ղալոյան/

1. 21/11/16թ. «Էրեբունի»-«Գանձասար-Կապան-2» (ԱԽ052) խաղին «Էրեբունի» թիմի ֆուտբոլիստ Հարություն Միրզախանյանի (N 13344) հեռացման (մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու համար) մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

21/11/16թ. «Էրեբունի»-«Գանձասար-Կապան-2» (ԱԽ052) խաղին «Էրեբունի» թիմի ֆուտբոլիստ Հարություն Միրզախանյանի (N 13344) հեռացման, մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, Համայակ Խաչատրյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցին տուգանել 30000 դրամ:

2. ՄԿԱ բաժանմունքի պետ Ա. Լոպոյանի 24/11/2016թ. զեկուցագրի քննարկումը

ՈՐՈՇԵՑԻՆ՝

19/11/2016թ. «Փյունիկ»-«Արարատ» (ԲԽ040) և 23/11/16թ. «Ալաշկերտ»-«Արարատ» (ԲԽ043) հանդիպումներում 20 ֆուտբոլիստի փոխարեն 17 ֆուտբոլիստ հայտավորված լինելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 34-րդ կետի համաձայն՝ «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել 50000 դրամ:

3. 19/11/16թ. «Բանանց-1-99»-«Փյունիկ-1-99» (18036) խաղին «Փյունիկ-1-99» թիմի մարզիչ Տիգրան Պետրոսյանցի (N 4765) հեռացման (խաղի ավարտից հետո մրցավարների հասցեին անվայել վիրավորական խոսքեր արտահայտելու համար) մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

19/11/16թ. «Բանանց-1-99»-«Փյունիկ-1-99» (18036) խաղին «Փյունիկ-1-99» թիմի մարզիչ Տիգրան Պետրոսյանցի (N 4765) հեռացման, խաղի ավարտից հետո մրցավարների հասցեին անվայել վիրավորական խոսքեր արտահայտելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 18-րդ կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, «Փյունիկ» ֆուտբոլային ակումբ ակումբին տուգանել 5000 դրամ:

4. 17/11/16թ. «Արարատ-2000»-«Գանձասար-Երևան-2000» (17Գ004) խաղի նախախաղային խորհրդակցությանը ոստիկանության ներկայացուցչի չմասնակցելու մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

17/11/16թ. «Արարատ-2000»-«Գանձասար-Երևան-2000» (17Գ004) խաղի նախախաղային խորհրդակցությանը ոստիկանության ներկայացուցչի չմասնակցելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 19-րդ կետի համաձայն՝ «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել 3000 դրամ:

5. Մանկապատանեկան բաժանմունքի պետ Բ. Ղալոյանի 23/11/2016թ. զեկուցագրի քննարկումը

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Խախտվել է 2016-2017թթ. մրցաշրջանի մանկապատանեկան մրցումների Կանոնակարգի Հոդված 12-ի 5-րդ կետի առաջին ենթակետը՝

5.1.1 17/11/2016թ. 13Ե047 Սիս-Կիլիկիա-04 - ԽՄՕՄՄ-04 խաղին, ԽՄՕՄՄ-04 թիմի մարզիչ՝ Համբարձում Նազարյանը /5600/ արձանագրությունում նշված երկու ֆուտբոլիստների խաղաժամանակ չի տրամադրել՝ տուգանք /1 x 1՝ x 500 = 500դ. և 1 x 4՝ x 500 = 2.000դ./:

Խաղային մարզաձևերի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցին տուգանել 2500 դրամ:

5.1.2 19/11/2016թ. 15Ա045 Փյունիկ-1-02 – Շիրակ-2-02 խաղին, Շիրակ-2-02 թիմի մարզիչ՝ Վարդան Պավլեյանը /1851/ արձանագրությունում նշված վեց ֆուտբոլիստների խաղաժամանակ չի տրամադրել՝ տուգանք /1 x 2՝ x 500 = 1000դ., 1 x 7՝ x 500 = 3.500դ., 2 x 15՝ x 500 = 15.000դ. և 2 x 17՝ x 500 = 17.000դ./:

«Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել 36500 դրամ:

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ԴԱԼԼԱՔՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԼՈՊՈՅԱՆ